Շարական XVII դարի Ս. Էջմիածնայ մատենադարանում

ԸՆՀՐԱԹԵՑՏ Ի ԲԱՐԵԿԵՐԴԵԼ

Մի հաղորդիչ, համակրելի և գաղափարական յօբելեան ենք սկսում կատարել այսօր՝ հայ տառերի գիւտի 1500 ամեակի եւ հայկական տպագրութեան 400 ամեակի։ Սա ամեն կողմով բարձր է այն բոլոր յօբելեաններից, որ մենք մինչև այժմ կատարել ենք սա ոչ առանձին անհատի է վերաբերում, ոչ էլ մասնաւոր հիմնարկութեան, սա ընդհանրական է, համազգային։ Այս յօբելեանով մենք գալիս ենք մեր երախտագիտական յարգանքը մատուցանելու այն անմահ հոգիներին, որոնք տուին մեզ մեր ազգային գոյութիւնն ապահովող այդ հզօր գործոնները։—Եւ ահա այդ գիւտի առաջ մենք մեզ, բնականաբար, բարոյապէս պարտաւոր ենք համարում մի որ և է նշանաւոր գործով յաւերժացնել այդ թանկագին յօբելեանը։ Երկար ժամանակ է արդէն, որ մեր պարբերական մամուլը քննադատութեան նիւթ է դարձրել այդ յօբելեանը, կապելով դրա հետ դպրոցական ու դրականական ֆոնդերին վերաբերեալ խնդիրները։

Դրանք իրանց կարգին։

Սակայն մենք սրանով ուզում ենք կրկին յիշեցնել մի, ըստ երևոյթին, աննշան, բայց իրօք խիստ մեծ կարևորութիւն ունեցող խնդրի մասին, որն իբրև մի անբաժելի խրօնիքական հիւանդութիւն ժամանակ առ ժամանակ երևան է գալիս մեր մամուլի էջերում, աղմկում, իր գոյութեան մասին յիշեցնում և դարձեալ մոռացութեան մատնւում և անյայտանում...

Դա մեր տառերի վերանորոգման խնդիրն է։ Շատ է հնացել անմահ Մեսրոպի սքանչելի ստեղծագործութիւնը—մեր այբուբենը. նա պէտք ունի զտման, պարզութեան և կատարելագործման։ Նրա մէջ մրցրուած է չափազանց շատ պայմանականութիւն, խիստ շատ է դժուարացել նրա ուսուցումը, տիրապետումը, ուղղագրութիւնը։ Առաջ են եկել ուղղագրութեան այլ և այլ հերձուածներ, որոնք ապացոյց են, թէ այլ ևս անհրաժեշտ է հարկաւոր ռեֆորմը։ Ահա քառորդ դար է, որ կատաղի բանակռիւների նիւթ է ծառայում ու-ի, ւ-ի և վ-ի հարցը և նա սակայն դեռ շատ հեռու է իր բաւարար լուծումն ստանալուց։ Գրողը շարունակ կանգնած է լինում ո-ի և օ-ի, հ-ի և յ-ի, ե-ի և է-ի, ճ-ի և ջ-ի, ծ-ի և ձ-ի անվերջ առեղծուածների առաջ։ Երբեմն մի հնչիւնի համար ունենք եղել տասն (վ. ւ),

Ամենից ծանր ու պատվաբեր պարտականութիւնն ընկնում է հարկավ Էջմիածնում հիմնված, Վեհ Կաթողիկոսի հովանավորութեան տակ գործող Կենդրոնական Ցանձնաժողովի վրայ, որի ծրագրած պայմաններում տեղի է ունենալու տօնակատարութիւնը։ Նրա խելացի և եռանդուն գործունէութիւնից է կախված տօնի յաջողութիւնը։ Նա շատ գործ ունի կատարելու՝ որպէս զի այս հազվադէպ, պանծալի, համազգային յօբելեանները արժանավայել կերպով տօնվեն և իրանց ցանկալի բարոյական և կուլտուրական հետքը թողնեն մեր կեանքում։

Սա. Մալխասեանց



Ս. Էջմիածին. Հայրիկեան մատենադարան։



Ն. Նախիջեւան. Ս. Խաչ վանքը
Նշանաւոր 1860 թ. իր տպարանով։



այն ինչ մի ուրիշ շատ պարզ ձայնաւոր հնչիւն չունի իր յատուկ նշանագիրը և կազմւում է միայն երկու տառերի պայմանական միաւորութիւնից (ու). յ-ին գործ է ածւում և իբրև կոշտ հ և իբրև կիսաձայն և նոյնիսկ իբրև անձայն. վերջապէս ո--գիրը, որը ոչ բաղաձայն է և ոչ ձայնաւոր, կարծես մնում է մեր այբուբենի մէջ միմիայն խանգարելու միւս տառերի ներդաշնակութիւնը և անվերջ շփոթութիւնների առիթ տալու համար ..

Այժմ գանք տառերի ձևին: Նրանցից մի քանիսը խիստ նման լինելով միմեանց (օր. տպագիր ա և տ, ո և ս, գ և դ, շ, ջ, չ և այլն) յաճախ մէկը միւսի տեղ է ընդունւում, ուստի ցանկալի է դառնում, որ տառերի ձևի մէջ եղած տարբերութիւնը որքան կարելի է մեծ և ակներև լինէր: Մեծատառերը իրանց ձևով երբեմն բոլորովին նման չեն լինում նոյն փոքրատառերին, նոյնպէս և տպագիրը չէ նմանում միևնոյն ձեռագիր տառին: Այս բոլորը սովորում են սովորողին իմանալ միևնոյն տառի այլ և այլ ձևերը—ձեռագիրը, տպագիրը, փոքրատառը և մեծատառը, որով նրա գործը, ի հարկէ, անհամեմատ դժուարանում է:

Առհասարակ կեանքում լաւ ընդունելութիւն է գտնում այն, ինչ որ պարզ է, հեշտ, դիւրըմբռնելի. դժուարին ու խըրթինը մի կողմ են թողնում միշտ: Եթէ մենք ուզում ենք, որ մեր մայրենի գիրն ու դպրութիւնն ընդհանրանայ, ամենքի սեպհականութիւն դառնայ, մենք պէտք է դարձնենք նրան ամենից առաջ պարզ և հեշտ, հակառակ դէպքում նա տեղի կըտայ օտարազգի գրին և դպրութեան, իսկ դրա հետ և լեզւին ..

Այս հարցի մասին մեր գրական ասպարիզում գոյութիւն ունեցող բարեկարգման խառնակութիւնը պէտք է վերջապէս մի օր կարգի տակ դրւի և որքան շուտ՝ այնքան լաւ: Դրա ամենայարմար ժամանակը հէնց այժմս է, երբ կատարւում է մեր տառերի գիւտի 1500 ամեակը. դա ևս կը լինէր անշուշտ մի նոյնպիսի հասարակական-ազգային գործ, ինչպէս և դպրոցական ֆօնդը և թերևս նրանցից էլ աւելի նշանաւոր, քանի որ մենք այժմ ուզում ենք ապահովել մեր դպրոցների նիւթական դրութիւնը, որպէսզի այնտեղ աւելի ապահովաբար աւանդւի մեր մայրենի գիրն ու դպրութիւնը, որոնք սակայն երբեք ցանկալի արդիւնքը չեն կարող տալ շնորհիւ իրանց այժմեան խառնակ և անկատար դրութեան:



Կարծում ենք ս. Էջմիածնի Յոբելեանական Յանձնախմբի վրայ պարտականութիւն է ծանրանում մտացութեան չը տալ և մոցնել օրակարգի մէջ այս խնդիրը: Թող նա կազմի մի ուսումնական յանձնախումբ, յանձնարարելով նրան մշակելու մեր այբուբենի



բարենորոգման խնդիրը, ենթարկէ դա մամուլի բազմակողմանի քննադատութեան և ապա ս. Էջմիածնում կայանալիք կօնգրէսում հաստատելով պարտաւորական դարձնէ բոլոր դպրոցների, մանկավարժների և գրողների համար:

Եթէ մենք մեր գրի և տպագրութեան տօնի առթիւ առաջ ենք քաշում մեզ համար մեծ կարևորութիւն ունեցող խնդիրները — դպրոցական կամ գրականական ֆօնդերը—առաւել ևս պարտաւոր ենք մտածել օր առաջ բարեկարգելու մեր այբուբենը, քանի որ միայն սրանից է կախւած նրա զարգացումն ու յառաջադիմութիւնը:

Այս խնդիրը հրապարակի վրայ դնելով, հրաւիրում ենք Էջմիածնի Յոբելեանական Կենդրոնական Յանձնաժողովին ստանձնել նախաձեռնութիւնը:

Լ Է օ Ն ի դ